



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4515-4526

281.69
S-16

10000

12

ԳԻՆ 100 ՓԱՐՍ

Ի Հ Ա Ն Դ Է Ս

49^{րդ} ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Ս. Ք Ր Կ Ձ Ի



Ի ԴԻՄԱՅ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԵԱՆ

Խ Օ Ս Ե Ց Ա Ի

Յ. Ո Ս Կ Ա Ն

1879 ՄԱՅԻՍ 10 ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ



ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՅՈՎԱԵՓԱՅ ԴԱՎԱՅԵԱՆ

1879

614.2

Ի Հ Ա Ն Դ Է Ս

49^{րդ} ՏԱՐԵԳԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Ա. Թ Ր Կ Ձ Ի



Ի ԴԻՄԱՅ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

Խ Օ Ս Ե Ց Ա Ի

Յ. Ո Ս Կ Ա Ն

1879 ՄԱՅԻՍ 10 ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



ՀՐԵՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ


Ի ՆՊԱՍՏ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Գիև 3 դարձուլ պրիևն



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՅՈՎ. ՍԵՓԱՑ ԳԱՎԱՑԵԱՆ

1879



17504-58

10985

Ամենապատիւ Սրբազան Հայր .

Բարեգործութեան նուիրեալ յարկիս ներքեւ Ձեր գահերկցութեամբը կը հաճիք բարձրացնել օրուանս հանդէսին շուքը , յորում սերտ կապակցութեամբ յօգին ընդ միմեանս կրօնական և ազգային զգացմունք բազմախուռն ամբողիս , որ արդ Ձեր շուքը կը պատէ ամեն հայաբնակ երկիրներէ և դաղթականութիւններէ համընթաց ժողովեալ , իբրու թէ միաբանութեամբ օգտիլ կամենային այս հանդէսէն առ ի մատուցանել Ձեզ իրենց ջերմ շնորհակալութիւնները այնչափ բարեաց համար զոր ըրիք և յօժարէք ընել սիրելի Ազգիս , որուն վիշտերը ամսքելու կը նուիրէք մտադիր Ձեր սիրտը Ձեր միտքը Ձեր անձը :

Արդարեւ այս ակումբը խորհրդածութեան նշանաւոր առարկայ մը կրնայ համարուիլ իբրեւ Հայութեան ներկայ յայուցիչ . բայց արդ , ես , իբրեւ Հոգաբարձութեան զգացմանց թարգմանն առաջի Ձեր , Սրբազան Հայր , և առաջի պատկառելի Տեարցս հանդիսականաց , հարկ կը համարիմ ամբողիւ խօսքս յատկապէս այս կէտերուն վրայ . ինչպիսի հաստատութիւն մի է այս , ինչ է նորա այժմու վիճակը և ինչ կարելի է ըլլայ նորա ապագայն . առ որ կը յաւելում փոքր ինչ անդեկութիւն ի վերայ նշանաւոր անցիցն ի հիմնադրութենէ նորին մինչեւ ցայժմ : Կտախալում սակայն յայտնել կանխաւ թէ ստանձնեցի այս պաշտօնը վասն զի անհնարին էր մերժել : Լաւ եւս էր , անշուշտ , թէ

այսպիսի պատկառելի ժողովոյ մը առջին խօսելու պատիւը ճարտարաբանի մը տրուեր . բայց քանի որ ինձ վիճակեցաւ , ինդրեմ Սրբազան Հայր և Մեծարդոյ Տեարք , որ խօսքիս թերին ձեր սրտից զգացմամբը ըսուք , և այսպէս , ձայնիս տկարութեան հակառակ , հետեւեցնէք փոքր խօսքէս մեր սիրելի ազգին համար մեծագոյն բարին :

Այժմ , Հարք իմ և Տեարք , Ազգային Հիւանդանոցիս Հոգաբարձութեան անդամք խմբովին իրենց շնորհակալութիւնը կը մատուցանեն ձեզ ամենեցուն որ զիրենք կը պատուէք ձեր այցելութեամբը յայս տուն ազգիս , և հըրապարակաւ իրենց յարգանքը կը վերանորոգեն այսու պատեհ առթիւ առ մերս բարեխնամ վարչութիւն ազգային , որ զիրենք կը մեծարէ իւր վստահութեամբը , առ որ ըստ պատշաճի պատասխանելու ջանադիր եղան և պիտի ըլլան , թէպէտ դառն են հանգամանք ժամանակիս . զի այսպէս միայն հնար է նոցա գրաւել ձեր ամենեցուն և ամբողջ մեր յարգոյ հասարակութեան դոհունակութիւնը որ հարկաւ զօրաւորագոյն քաջալեր է իրենց համար յարատեւելու ի ջանս մինչեւ ի լրումն պաշտօնական շրջանին յորում ակնունին ամեն կարելի բարւոքմամբ աւանդել այս յանձնարարութիւնը իրենց յաջորդներուն որոնց առջին պիտոյից սահմանը , անշուշտ , աւելի պիտի ընդարձակի ըստ պահանջման ժամանակիս :

Արդ , ներուր ինձ հակիրճ բացատրութիւն մի տալ նախ , թէ լոկ հիւանդանոց պարզ բառին տակ որչափ տարասեռ ճիւղեր կը պարունակին հաստատութեանս շրջափակ որմին մէջ . զի այսպէս դիւրին կըլլայ ըմբռնել նորա պէտքն ու կարիքը , և գուցէ համոզուիք ինձ հետ թէ այս հաստատութիւնը մեզ համար առաջնութեան կարգը ունի յետ եկեղեցւոյ որով կապրինք տակաւին իբրեւ ուրոյն ժողովուրդ :

Երբ ամեն ազատութիւն մեզ համար անհետացաւ , կըրօնականը միայն մնաց կանգուն , իբրեւ սիւն հաստատու-

թեան բարձրացեալն ի միջոյ աւերակաց , խաչի նշան մը կըրելով վրան : Արդ , այդ սիւնն էր միայն Հայուն ապաւէն , ուստի սերաիւ զայն ողջագութեց . այդ եղաւ , է , և պիտի ըլլայ , սիւն՝ ոչ յաւերակի միայն , այլ սիւն լուսաւորութեան իբրեւ լրացութիւն ի մուտս նաւահանդատի առ ի ցուցանել մեզ ճանապարհ ուղիղ ի բարօրութիւն , տալով միշտ զկայսերն՝ կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ :

Կրօնի լուսով թող այլք տեսնան միայն երկինքը . մենք անով կը տեսնենք նաեւ հոս մեր բնակութեան անձուկ վայրը , անով միայն ակորժ կզգանք զիրեսարս աներկմիտ անուանել եղբայր և քոյր . և ահա այս եղբայրական համերաշխութեանէն կը ծնանին ինչ որ տակաւին ունինք իբրեւ ազգ կամ ժողովուրդ վիճակեալ ընդ իշխանութեամբ Օսմանեան Տէրութեան որոյ կառավարութիւնը միշտ ազատամտութեամբ յարդած է իւր հպատակաց կրօնի և խղճի ազատութիւնը : Բայց ինչ ունինք . Պատրիարքարան մը , որոյ պաշտօնական ձեռնհասութեան կը պատկանին յանուն կրօնի երաշխաւորեալ մեր իրաւունք և յատուկ առանձնաշնորհութիւնք : Ուրոյն Եկեղեցի , որում կցորդ են վանորայք և դպրոցք . այս իսկ է , ազատ պաշտաման և դատարակութեան իրաւունք , և հիւանդանոց անուամբ հաստատութեան մը որուն կցորդ են կարօտ ժողովրդեան մը ամենայն պէտք և կարիք . հանրական օգտից և բարեգործութեանց ընդարձակագոյն ասպարէզ զոր կարելի ըլլայ երեւակայել . այսպէս է այս յարկը , որուն ներքեւ համախմբեալ ենք և զոր հաճելի է ինձ անուանել սոսմ ազգի : Հետեւաբար հիւանդանոց բառը , իր սովորական նշանակութեանէն զատ , ընդարձակագոյն դադարաւոր մը կը յարուցանէ մեր մէջ : Եւ յիրաւի , նկատեցէք ինչպիսի բացառութիւն . հոս ձեր աչաց կը ներկային ոչ միայն երկսեռ չքաւոր աղքատաց յատկացեալ երկարածիք սրահներ , ոչ միայն , ինչպէս արդ իսկ ըսի , եկեղեցւոյ կից աղքատիկ մանկանց դպրոց մը , այլ կարօտ և ինքնօգնութեան օրի-

նօք ապրող հասարակութեան մը ամեն կարգի վշտացեալ-
ները ասպնջականերու օթեւանք :

Նոյն իսկ մարմնոյ խօթութեանց նկատմամբ բացի սովու-
րականներէն կը տեսնաք տարափոխութեանց և խելագա-
րութեանց սրահներ , որոնք այլուր ուրոյն անկերանոցներ
են . բայց և այնպէս ցարդ միշտ մարմնոյ ախտից շրջանին
մէջն ենք , ուսկից պէտք է ելլանք հօս նկատելու համար
բարոյական ախտից դարմանոց մը որ ոչ նուազ ընդարձակ
է և ոչ նուազ կարեւոր : Կան ժողովրդեան մը մէջ ի շարն
հրապուրեալ անմեղներ զորս վտանգէ զերծանելու է . ստա-
հակներ , զորս ամաք խրատելու է որպէս զի արդարութեան
խստութենէն աղատին . կան անոք , անօգնական մանկունք ,
զորս սնուցանելու է և օրինաւոր ապրուստի միջոց մը ցոյց
տալու է անոնց . ո՛ր խրկենք այսպիսիները , ո՛ր պատըս-
պարենք . դարձեալ հիւանդանոց , յորում պէտք է բաց
ըլլան այս կարգի եկաւորաց համար զգաստարան մը , որ-
բանոց մը և արուեստանոցք : Այս ընդհանուր պէտքերուն
վրայ յաւելունք անհատականներն ալ , ինչպէս են պատուոյ
խնդիրներ , զորս քօզարկելու է . այլ և այլ կարգի ամբաս-
տանեալք , զորս օթեւանելու է . ո՛ր խրկենք ասոնք . դար-
ձեալ յազգային հիւանդանոց , զի այդ է անդորր օթեւան :
Արդարեւ ի՞նչպիսի ընդարձակ օթեւան անձուկ սահմանի մէջ :

Այս տեսութեան եղանակաւ լիովին զգալի կ'ըլլայ այն
խնդակցութեան արժէքը զոր կը մատուցանէք , Հարք իմ
և Տեարք , ազգային տանս Հոգաբարձութեան որ փոխա-
դարձաբար կարի շնորհապարտ է ձեզ , մանաւանդ որ պա-
տեհութիւն կուտաք իրեն միւսանգամ զեկուցանելու ձեզ ,
Մեծարգոյ Տեարք , թէ իրեն համար մեծագոյն քաջա-
լեր ձեր օժանդակութիւնն է . որպէս զի աւօրին պէտա-
քերը լեցուելէն ետքը զարգանայ այս անդուգական հաս-
տատութիւնը ըստ պահանջման ժամանակին : Կարի զգալի
պէտք մի է այս , Տեարք , և չէ հնար որ վրիպի մերայնոց
ուշադրութենէն : Ենթադրենք թէ հոգաբարձութեան մը

յանձնուի հաստատութիւնս բաւական լաւ վիճակի մէջ ,
և նա , ի լրումն շրջանին , նոյնպէս աւանդէ յաջորդին , հար-
կաւ անպարտ կը մնայ ի պատասխանատուութենէ առաջի
ազգին . բայց այսչափ միայն և ոչինչ աւելի . իսկ թէ յա-
ջողի բարւոքում մը յաւելուլ , այնու միայն նշանաւոր
սպաս մատուցած կ'ըլլայ հասարակութեան , զանի շնորհա-
պարտ կ'ընէ , և որ աւելին է , ինքզինքը դօճ : Այժմու
Հոգաբարձութիւնը յոյժ կը փափաքի այս խղճի դօճու-
նակութիւնը ունենալ լիովին , ընելով ինչ որ կարելի է
ընել իւր շրջանին մէջ յօգուտ ազգին . իսկ շնորհակալ-
եաց դալով՝ այդ արդէն ծառայողներուն իրաւունքն է և
անոնց անկ է տալ : Այս կարգի երախտաւորներէն են բա-
րեյիշատակ հիմնադրէն ետքը անոր յաջորդող և նորա
արժանաւոր դորձակից Միքայէլ Ամիրայ Փիշմիչեան , որուն
կը պարտինք Հիւանդանոցի վագըֆներուն սահմանուիլը .
ապա ժամանակի կարգաւ միայն յետագայ բայց ազգա-
սիրութեան եռանդով և երախտօք յոյժ առատաշնորհ
եղած են հաստատութեանս Տատեան Ամիրայք , որք ոչ
միայն առատաձեռնեցին աղքատաց , ալ ձեռքով տուած-
նին ձախը չգիտնալով , այլ և բարեյիշատակ Սուլթան
Ապաիւլ Մէճիտի մասնաւոր ակնարկը յաջողեցան գրաւել
այս հաստատութեան վրայ որով հացի և մսի նշանաւոր
թոշակ մը շնորհուեցաւ Նորին Վեհափառութեան առա-
տաձեռնութենէն . առ որ աւելցուց Պօղոս Ամիրայն նաեւ
յարքունուսա իւր տան յատկացեալ մսի բաժն ալ , և այս
թոշակաց փոխան (պէտէլ) է որ հաստատութիւնս կ'ստա-
նայ ամիս յամսոյ Տէրութեան գանձէն 3030 դրուշ . նոյն-
պէս Պալեան Կարապետ Ամիրային առ աղքատս առաս-
տուրքերն և շէնքիս նորոգութիւնք զինքը նշանաւոր բա-
րերարաց կարգը կը դասեն : Ապա ըստ կարգի կուգան
մերթ օժանդակ ընկերութիւնք , մերթ խնամակալուհեաց
ընկերութիւն մը , և , բաց ի նշանաւոր նպատակամ
սպաս
մատուցանող ազգասէր անհասներէ , յաջորդական հոգա-

բարձութիւնք որոնց ամենն ալ ըրին , ինչ որ կարելի էր իրենց ընել , յօգուտ պատասպարելոց ի Հիւանդանոցիս մինչեւ ցաւանդումն նորա ի խնամս արդի Հոգաբարձութեան : Բայց ինչ աստիճանի բարերարութիւններ ալ ըրած ըլլան այս ազգային տան վերոյիշեալ առատաշնորհ Ամիրայք , ազգասէր Էֆէնտիք , բարեգութ Տիկնայք և ազգօգուտ ընկերութիւնք և որչափ ինչ կարելի ըլլայ ընել ի ներկայիս և յապագային , միշտ հաստատութեան անդուգական բարերարն է և պիտի ըլլայ նորա հիմնադիրը Յարութիւն Ամիրայ Պէղճեան որ 1830 ին ի հիմանց կառոյց այս շէնքը իւր ժամանակի բարեխշտատակ և վեհանձն Սուլթանէն ձրիապէս ի շնորհս ազգիս ստացած անդաստանին մէջ , միայն խնոր մը վճարելով , որ ցարդ կը շարունակուի . և հոս փոխադրեց 1803 ի Նարը Գաբու շինուած հիւանդանոցը , ուր տեղւոյն անձկութիւնը և օգին անյարմարութիւնը հիւանդաց առողջութեան նպատակով չէին կրնար ըլլալ : Ապա այս շէնքին շուրջն եղող անդաստաններն ու բանջարոյ պարտէզներն ալ գնոց ստանալով անոնց արդիւնքը Հիւանդանոցիս յատկացուց . և տանս կահքը , գոյքը և առօրին ծախքը լիովին մատակարարելէ վերջը , ապագային համար հաստատ և բաւական եկամտից ազբիւրներ պատրաստել երբ կը խոկար , սեւ օրն եկաւ , և մահը կապտեց ազգիս աչքին ըյսը , զաննման և աննմանելի Պէղճեան Ամիրայն , որ ուսոյց մեզ , ոչ բանիւ , այլ արդեամբ , թէ ինչպէս պէտք է պաշտենք մեր կրօնքը , պատուենք տիրող իշխանութիւնը և սիրենք մեր ազգը :

Օրհնեալ ըլլայ նորա յիշատակը :

Եւ արդ , ինչ որ այդ Մեծ Ազգայինը յակամայից թերի թողուց , այն է մեր կարեւոր բաժինը ի լրումն մարդասիրական գործոյս . և անշուշտ Նախախնամական չափ մի է այս , որպէս զի ազգային հաստատութեանս խնամքը ստանձնող յետինքս ալ բարեխշտատակ Հիմնադրին գործակցելու մեծագոյն բաժին ունենանք :

Քաջ խի գիտէք , Տեարք իմ , թէ օրուան պէտքերը անեցուն են . պատասպարելոց թիւը բազմագոյն , ծախքերը ծանրագոյն . հետեւապէս առօրին հաշիւնիս փակելու համար ձեր մեծագոյն շնորհաց կարօտութիւնը կարի զգալի է . բայց մինչեւ ցարդ մեզ մատուցած օժանդակութիւնն ինչ կը յուսադրէ զմեզ թէ այսչափ բազմաթիւ վշտացեալներու դէմ ձեր գութը երբէք չպիտի փակէք : Այժմ , Սրբազան Տէր , Ձեր և պատկառելի ակումբիս առջին պարս անձին կը համարիմ հոս պատասպարեալ հիւանդաց , խօթացելոց , որբոց և ամենայն տառապելոց երախտագիտութեան վիպութիւնը ակնածութեամբ մատուցանել ամենայն նուիրատու տեարց և տիկնանց , և յատկապէս կաղաչեմ զձեզ անոնց կողմանէ , Սրբազան Հայր , որ իրենց սղորմոյններուն համար խնդրէք Ձեր սուրբ մաղթանօք երկնից ողորմութիւնը : Բայց ահա երախտագիտութեան զգացումը մեր մեծագոյն պարտականութիւնը կը զարթուցանէ մտացս մէջ , և խօսից անբաւականութիւնս կ'ստիպէ զիս յիշել միայն թէ՛ Նախախնամութեան յատուկ շնորհիւր , ունինք մեր գերագոյն Տէրը մեզի գերագոյն բարերար . զի երկնաւորէն խնդրուած հանապազօրեայ հացը հոս ազբատը մասնաւորապէս Նորին կայսերական վեհափառութեան առատաձեռնութեամբ կը ճաշակէ , և հիւանդի շրթանց մատուցուած կազդուրիչ արգանակը նորա յատուկ երախտիքն է : Արդ , Տեարք իմ , օժանդակեցէք ինձ , և այս մարդասիրութեան մեծ գործին համար ի միտախն խնդրենք մեր Սրբազան Հօրմէն որ ուխտիւք և աղօթիւք հայցէ ի Տեառնէ իւր շնորհակալութեան մաղթանաց մէջ մեր Առատագութ վեհափառ Տէր և հպատակասէր թագաւոր Սուլթան Ապախիւ Համիտ խանին անդին կենաց երկարութիւն և անդորրութիւն , և նորա կառավարութեան միշտ բարօրութիւն , միշտ յաջողութիւն :

Այսպէս ահա գոյենք, ըստ կարի, օրուան պէտքն ու կարիքը, բայց ինչ հարկ է ընել մօտաւոր ապագայի մը առջին, յորում մեծագոյն պիտի ըլլան մեր պէտքերը: Գուցէ հարցնէք ինձ թէ որո՞նք են այդ պէտքերը:

Եթէ տառապելոց թիւը կաւելնայ հարկ է պատասպարանը ընդարձակել. ահա ստիպողականութիւն մը. եթէ հաստատագոյն քարաշէնք իսկ կը հիննան, կը կործանին, չորից հողմոց դէմ բաց և այսչափ բազմութիւն պարունակող ասաղձէ շէնք մը, մերթ ընդ մերթ նորոգմամբ, չէ հնար որ ազատ մնայ ժամանակին ազդեցութենէն. ահա մեծագոյ ստիպողականութիւն մը եւս:

Արդ՝ քանի որ պէտք կայ և ազգին բարիք փափաքելն ալ արգահատելի է, ներուի ինձ այժմ ընթացքէս փոքր ինչ խոտորիլ, փութով առ այն վերադառնալու խոստումմբ:

Ենթադրենք արդ, թէ հոս, այս հողին վրայ, որ յարմարագոյնն է, և պարզ հիւանդանոց անուան տակ միշտ, ազգային հանրական շէնք մը ունենայինք. ուրոյն ճիւղերու բաժնուած, արդի ողջպահիկ կատարելագոյն օրինօք ճարտարապետեալ: Հիւանդաց, խօթամիտներու, տարափոխից անջատ սրահք. դեղատուն. բժշկի, վիրաբուժի, դեղագործի օթեւանք. ապա որքանոց մը մատաղ մանկանց, զգաստարան մը, վարժարանք և արուեստանոցք կարեւոր ճիւղերով. լուացարանք, բաղանիք, հանդերձատունք, մարանք, ամբարանոցք, խահարանք, գոմք և ամենայն պիտանի մատունք. և մէջտեղը վայելուչ եկեղեցի մը, և նորա մօտերը երկուստեք վարդապետարան, հիւրանոց, խորհրդարան և գրասենեակք. ապա գրատուն մը, թանգարան մը, գուցէ և տպարան, և ազգային գումարմանցս դահլիճք և զբօսավայրք. և այս ամեն շինութեանց մատունք ժառուղիներով բաժնուած, պարտէզներով և բուրաստաններով շրջապատուած, զոր ականակիտ առուք ուսողանեն և դեղաշէն աղբիւրք զարդարեն: Գեղեցիկ է կարծեմ այս պատկերը. արդ քա-

նի որ երեւակայելն ազատ է, հանդուրժեցէք վայրկեան մը միայն և յաւելում մաս մի եւս որուն վրայ արդէն իսկ խօսուած է իբրեւ կարեւորութիւն, այն իսկ է տեսնալ սա դիմացի ընդարձակ վայրը տխար ազարակ մը դարձած. ուր մեծաց հայոց առ մեզ ուսանող հիւր պատանիք, հոն, վարը կառուցեալ երկրագործական վարժարանի մէջ առած դասերնին մարդ ընեն կորովի բազիօք. և այսպէս աստի, ի մէջ, ազգիս գրիէն առնուն հողագործական նորանոր ճարտարութեանց հնարք և գաղանիքը, և եթան նոքօք ճոխայնեն մեր նախնեաց օթեւանը յԱրձախ յԱտրպատական և ի բլուրակնեան աղբիւրս: Բաւ է, կրնաք ըսել ինձ. բաւ է. այդ պատկերք մարդը բանաստեղծ կրնան ընել, և մերը հոս ստիպողական, գրական պիտոյից խնդիրն է: Այո՛, այնպէս. ես ալ ձեզ համախօհ եմ ըստ ամենայնի, և ի հաստատութիւն բանիս կը յաւելում թէ, այժմու շէնքը, ինչ որ ալ է, անով գոհ ըլլալու ենք մինչեւ որ բաւական հասոյթ ձեռք բերուի. և ապա չափով մը կրնանք ընդարձակել մեր տեսութեան սահմանը. մանաւանդ զի ես ինձ սկզբունք ունիմ թէ՛ ինչ որ մեծ ազդ երը շատ խելքով և շատ ստակով կ'ընեն, մենք համեստ խելքով և քիչ ծախքով ընել կը պարտինք, և այն միայն մեր պիտոյից չափովը. բայց քանի որ խնդիրը կարեւորութենէ զուրկ չէ ահա պարզ կէտ մը զոր հարկ կը համարիմ, ոչ թէ առաջարկել, Տեսնք իմ, զի արդէն իսկ լուծեալ է, այլ յիշեցնել միայն: Մեք հայքս ի նախնեաց մնացած որչափ ազգային հաստատութիւն որ ունինք, ըստ մեծի մասին անհատական շնորհումներ են. կուղեմ ըսել թէ կարող և ազդեցութիւն ունեցող անձինք, ինչպէս էին մեր նախնի իշխանազունք, Նախարարք և ի վերջումս Ամիրայք, ազգային հաստատութեան մը կը ձեռնարկէին ինքնայօժար, և այլք կրտսերագոյնք ակնածութեամբ կը փութային նոցա գործակցիլ. բայց հիմայ ժամանակը փոխուած է. չեմ ըսեր թէ կրօնասէր և ազգասէր մեծ տեսքք չկան. այո՛ կան, և


մեծ շնորհներ ալ կարող են ընել ազգիս , մաղթենք որ այնպէս ըլլայ . արդարեւ ի՛նչ բարեբաղդութիւն մեզի համար եթէ Սբարթաւեան մը Պօլտոյ մէջ ալ յառնէ . բայց այդ կետին չյե՛նունք բացարձակապէս . այժմ ժողովուրդը առաջնութեան ձայն ունի . վայել է իրեն որ գործ ալ ունենայ : Արդ եթէ Պօլտոյ մէջ գտնուող հայքս , (տիկնայք ալ ի միասին առնելով որ աւելի բարեգութ կը համարուին) մի անգամ եւեթ 10 կամ 20 դահեկան տանք այս նպատակաւ , կրնաք հաշուել թէ գործը որչափ կը գիւրանայ , և եթէ յաւելումք առ այդ մասնաւորաց նուէրները կրնայ լրանալ , և ինչ որ պահ մի առաջ երեւակայական էր , քանի մը տարուան մէջ իշողութեան կը դառնայ ինքնօգնութեան օրինօք որով առանց ազմուկի կը գործուին հրաշալիք քաղաքակրթութեան , և այսպէս մեք հայքս նախաձեռն կըլլանք զայն ըմբռնելու և գործադրելու Բարձրագոյն Դրան անմիջական և խրախուսիչ հովանոյն ներքեւ , և նոյն իսկ երկրին ծառայութիւն մը կ'ընենք ազգային պիտոյքնիս հոգալով : Բայց ինձ դարձեալ հարկ է առ Ձեզ դիմել Սրբազան Հայր , և Ձեր ներողամտութիւնը խնդրելով ի վերջնումս վկայութիւն առ թէ :

Բարիք կամենալը՝ շատերը կրնան կամենալ , ինչպէս ես իսկ ցարդ կամեցայ . բայց իրօք բարիք գործել կամ գոնէ ազդեցութեամբ միջնորդել որ բարիք մը գործուի՝ առաքինեաց է բաժին : Եւ երբ երկինք ժողովրդեան մը մէջ յարուցանէ մէկը , որուն պատկերը յատուկ շնորհ մը ունենայ և խօսքը օծում մը , և բանիւ խաղաղութեան միայն սրտերը իրեն դրաւէ , այնպիսին ընտրեալ Տեառնէ և յատուկ պարգեւ նորա այն ժողովրդեան համար , ինչպէս էք Դուք , Սրբազան Հայր , Հայ ազգին համար , Դուք , որ ի վաղ ժամանակաց անտի միշտ սիրելի անուն մը արդեամբք Ամենասիրելի ըրիք Ձեր անձին վրայ և յաւէտ իրաւունք ստացաք մեր և յեանոց երախտագիտութեան : Արդ , եթէ Ձեր Սրբազնութիւնը հաճի ի նպատակ հոս պատասպարեալ


կարօտելոց և ուսանող երիտասարդաց խօսք մը արտասանել , գուցէ թերի զրոյցս արդիւնաւորի և ընդ վայր խօսած չըլլամ . զի ցանկալի է յոյժ , Սրբազան Հայր , որ Ձեր հրակողութեան ներքեւ մեք հայքս առանց անապանծութեան և մեղմով ապացուցանենք թէ , որչափ տարաբաղդ ալ ըլլանք և վտարանդի , միշտ ի վաղ ժամանակա քաղաքակրթեալ ազգի մը սերունդն ենք և յարեւելք քրիստոնէութեան առաջին օրիցեան ժողովրդեան որդիք , և ոչ խառնիճաղանձ ջուր մը , ինչպէս կը յանդգնին երբեմն ամբաստանել զմեզ անոնք որ զմեզ չեն ճանչնար կամ չեն ուզեր ճանչնալ :

Եւ ահա , կը կնքեմ խօսքս , Սրբազան Հայր , բայց ներեցէք որ Ձեր աջն համբուրեմ և ըսեմ . Օրհնեցէք զմեզ , Հայր Սրբազան , Օրհնեցէք , որպէս զի որչափ որ կանք , Հայ եղբարք և քորք , հոս և ընդհանուրս , իրար այնպէս սիրենք ինչպէս որ Դուք զմեզ կը սիրէք . Օրհնեցէք զմեզ , բարեգութ Հայր , որպէս զի հոգին միաբանութեան սիրովէ զմեզ և մխիթարէ , և մեք պատուով կրենք Հայ անունը մեր կուրծքին վրայ : Եւ Դուք տեսնաք , Հայր , Ձեր որդիքը բարեբաստիկ , տեսնաք և ուրախանաք , և որովհետեւ անձնուէր եղաք միշտ Ձեր որդւոյն համար , մաղթեմ ի բոլոր սրտէ՝ որ այդ սուրբ ուրախութեան մէջ գրանաք լիովին Ձեր առաքինութեան փոխարէնը :

Յ. ՈՍԿԱՆ



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]



12


ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹՅԱՆ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹՅԱՆ

Ի ՆՊԱՍՏ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

Գիև 3 դուրսը պիկն

4575-4526

<< Ազգային գրադարան



NL0031474

<< Ազգային գրադարան



NL0031473

2013

<< Ազգային գրադարան




NL0031472

<< Ազգային գրադարան




NL0031466

<< Ազգային գրադարան




NL0031471

<< Ազգային գրադարան




NL0031465

<< Ազգային գրադարան



NL0031470

<< Ազգային գրադարան




NL0031464

<< Ազգային գրադարան




NL0031475

<< Ազգային գրադարան



NL0031469

<< Ազգային գրադարան



NL0031463

4374 77 80 83
 75 78 81 (84)
 76 79 82

